Կարգապահական գործ թիվ ԿԳ-24177

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ՄԱՐԻԱՄ ԱՐԱՄԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետև նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Կարինե Բաղդասարյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վահե Աստվածատրյանի, Միքայել Դանիելյանի, Գուրգեն Թորոսյանի, Արաքս Վարդանյանի և Վահագն Քեշիշյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

քննության առնելով փաստաբան Մարիամ Արամի Աբրահամյանին (արտոնագիր՝ թիվ 490), **(այսուհետև նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)**, կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Արմեն Սարգսյանը (**այսուհետև՝ Դիմող),** դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետև՝ Պալատ),** հայտնել է, որ 2021թ.ապրիլին դիմել է փաստաբան Մարիամ Աբրահամյանին սնանկության գործով իրավական օգնություն ստանալու նպատակով: Փաստաբանին ծառայությունների դիմաց վճարվել է 500.000 ՀՀ դրամ:

Դիմողի պնդմամբ, 2021թ.մինչ սույն դիմումը ներկայացնելու օրը գործը դեռ դատարանում չէ, իսկ Փաստաբանը չի իրազեկում գործի ընթացքի մասին և գրեթե չի պատասխանում զանգերին և նամակներին:

Դիմողը նշել է, որ Փաստաբանը 2021 թվականից շուրջ 4 տարի անգործություն է դրսևորել և վերցնելով գումարը չի կատարել իր պարտականությունները:

Նշվածի հաշվառմամբ, Դիմողը խնդրել է հարուցել կարգապահական վարույթ փաստաբան Մարիամ Աբրահամյանի նկատմամբ:

Միևնույն ժամանակ սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 09.01.2025 թվականին Դիմողին առաջարկվել է՝ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ՝ նաև Օրենք)** 39.5 հոդվածի 4-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի

համար անհրաժեշտ ապացույցներ:

Դիմողը 16.01.2025թ. բացատրությամբ ըստ էության պնդել է դիմումում ներկայացված իր դիրքորոշումը, հավելելով, որ ինքը 10.12.2024թ. ուղարկել է դիմում Փաստաբանին վճարված գումարը վերադարձնելու պահանջով, սակայն փաստաթուղթը ներկայացնելու պահի դրությամբ որևէ արձագանք առկա չէր, Փաստաբանը ոչ գումարն է վերադարձրել, ոչ էլ պատասխանել է նամակներին:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Մարիամ Աբրահամյանին առաջարկվել է՝ Օրենքի 39.2-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, ներկայացնել բացատրություն Արմեն Սարգսյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը 18.11.2024թ. ներկայացրած բացատրությամբ հայտնել է, որ 2021թ. մայիսին Արմեն Սարգսյանի հետ կնքել է ծառայությունների մատուցման պայմանագիր՝ **վերջինիս սնանկ ճանաչելու պահանջի հետ կապված**:

Փաստաբանը նշել է, որ կատարել է անհրաժեշտ բոլոր հարցումները: Ըստ Փաստաբանի, պարտապանի գույքի արժեքի և պարտավորությունների միջև տարբերությունները գնահատելու և դատարան ներկայացնելու համար Դիմողին առաջարկել է ներկայացնել շուկայական գնահատման ապացույց կամ տրամադրել լուսանկարներ, սակայն Դիմողը չի ցանկացել գործը շարունակել, չնայած գրավոր կարգով չի դիմել ծառայությունների մատուցման պայմանագիրը լուծելու խնդրանքով: Ըստ Փաստաբանի, 2021թ. ձեռք բերված փաստաթղթերը տրամադրվել են Դիմողին:

Փաստաբանը նշել է, որ 2022թ. Դիմողը կրկին ցանկություն է հայտնել գործը շարունակելու վերաբերյալ, ինչով պայմանվորված Փաստաբանը կատարել է հարցումներ Դիմողի կնոջ գույքային իրավունքների վերաբերյալ: Փաստաբանը հայտնել է, որ Դիմողը այդպես էլ չի ներկայացրել ոչ լուսանկարները և ոչ էլ բաժնեմասի գնահատման վերաբերյալ ապացույց:

Փաստաբանի պնդմամբ, Դիմողը գրավոր չի դիմել պայմանագիրը դադարեցնելու և վճարված գումարը վերադարձնելու պահանջով: Նշված պահանջի առկայության դեպքում Փաստաբանը պարտավորվել է վերադարձնել գումարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել:

Միևնույն ժամանակ սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 09.01.2025 թվականին Փաստաբանին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 4-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Ի պատասխան 09.01.2025թ. պահանջի՝ 2025թ. հունվարի 23-ին Պալատում մուտքագրվել է Փաստաբանի փոստով ուղարկված բացատրությունը, որով Փաստաբանը տեղեկացրել է, որ արդեն իսկ ներկայացրել է բացատրություն, որում մանրամասն նշվել է հանձնարարության կատարումը ձգձգվելու պատճառների վերաբերյալ, այն է՝ Դիմողի կողմից որոշ ապացույցներ չտրամադրելը:

Փաստաբանը նշել է, որ շուկայական գնահատմանը ներկա ացվող գույքի լուսանկարները Դիմողից պահանջելուց բացի այդ լուսանկարները ձեռք բերելու որևէ տարբերակ չի ունեցել: Դիմողը պետք է տրամադրեր այդ լուսանկարները, որպեսզի դրանք

ներկայացվեր գնահատողին: Գնահատող ընկերություններ, կամ մասնավոր անձինք Մեղրի քաղաքում չկան, նրանք հրավիրվում են մարզկենտրոնից կամ մայրաքաղաքից: Մասնագետները գալիս են, այդ երկար ճանապարհն անցնում եմ միայն գույքի առկայության հարցում հավաստիանալուց հետո: Կամ էլ դիմողն պետք է Փաստաբանին ներկայացներ արդեն գնահատման հաշվետվությունը, ինչպիսի տարբերակը հանդիպումների ժամանակ ներկայացվել է Դիմողին:

Փաստաբանը բացատրությանը կից ներկայացրել է փաստաբանական ծառայություն մատուցելու վերաբերյալ 05.05.2021թ. պայմանագրի, Դիմողի «Դիմում» վերտառությամբ փաստաթղթի և այդ փաստաթղթի ստացումը հավաստող փոստային ծրարի և առաքանու պատմության քաղվածքի պատճենները, ինչպես նաև պահանջը 14.01.2024թ. ստացած լինելու մասին գրությունը:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 25.11.2024թ. թիվ 407-Ա/ԿԳ-24177 որոշմամբ փաստաբան Մարիամ Աբրահամյանի նկատմամբ Օրենքի **19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի**, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետև նաև՝ Կանոնագիրք**) 2.7.2, 3.5.5, 3.1.3, և 3.6.1 ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

26.11.2024թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Դավիթ Առաքելյանին (**այսուհետև՝ նաև Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 23.01.2025թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-5-րդ կետերում նշված փաստերը:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 23.01.2025թ.:

Հանձնաժողովի նիստերը տեղի են ունեցել՝ 05.03.2025թ. ժամը 18:30-ին, 19.03.2025թ. ժամը 19:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբան Մարիամ Աբրահամյանը ստանձնել է Դիմող Արմեն Սարգսյանի իրավունքների ու շահերի պաշտպանությունը: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի և*

Փաստաբանի բացատրություններով, ինչպես նաև 07.05.2021թ.վճարման անդորրագրերով:

2. Կողմերն ընդունել են, որ փաստաբանական ծառայությունների մատուցման առարկան հանդիսացել է՝ Դիմողին սնանկ ճանաչելը: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի բացատրություններով:*

3. Փաստաբանի կողմից դիմում չի ներկայացվել ՀՀ սնանկության դատարան՝ Դիմողին սնանկ ճանաչելու վերաբերյալ: *Սույն փաստը հաստատվում է «դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում անհրաժեշտ տեղեկատվության բացակայությամբ, ինչպես նաև Դիմողի և Փաստաբանի բացատրություններով:*

4. 2022 թվականի ապրիլ-մայիս ամիսներին Փաստաբանը ստացել է մի շարք հարցումների պատասխանները: *Սույն փաստը հաստատվում է Փաստաբանի 18.11.2024թ. Պալատում մուտքագրված բացատրությանը կից ներկայացված փաստաթղթերով:*

5. Փաստաբանի և Դիմողի միջև 2021 թվականի մայիսի 5-ին կնքվել է «Փաստաբանական ծառայություն մատուցելու մասին» պայմանագիր (այսուհետև՝ Պայմանագիր), որի 2.1 կետի համաձայն՝ Փաստաբանը պարտավոր էր կազմակերպել Դիմողի մինչդատական և դատական պաշտպանությունը քաղաքացիական գործով՝ ՀՀ ընդհանուր իրավասության դատարանում: *Սույն փաստը հաստատվում է 05.05.2021 թվականի Պայմանագրի պատճենով:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Մարիամ Աբրահամյանը փաստաբան է հանդիսանում 20.10.2006 թվականից, և 2020-2025թթ. ընկած ժամանակահատվածում Փաստաբանն ունի երկու կարգապահական տույժ, որոնք մարված են:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Մարիամ Աբրահամյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2, 3.1.3, 3.5.5, և 3.6.1 ենթակետերի պահանջների խախտման համար:

******

➢ **Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտման մասով**

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝*

*1) ազնվորեն և **բարեխղճորեն** պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով.*

2) պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:

Կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին **բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ** իր մասնագիտական*

կարողությունների սահմաններում, ***ինչը ենթադրում է*** *իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն,* ***հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:***

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն,* ***բարեխղճորեն****, որակավորված, սկզբունքայնորեն և* ***ժամանակին****, ինչը ներառում է՝*

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Համադրելով Օրենքի և Կանոնագրքի նշված ենթակետերը՝ Հանձնաժողովը գտնում է, որ դրանք համակցությամբ մեկնաբանելիս բացահայտվում է փաստաբանի գործունեության բարեխղճության, և հանձնարարության պատշաճ և լրիվ կատարման իրավական բովանդակությունը:

Նշված կանոններով փաստաբանի համար սահմանվում են պարտականություններ, այն է՝ փաստաբանը պարտավոր է ելնել վստահորդի նպաստավոր շահերից և բարեխղճորեն և ժամանակին պաշտպանել վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը:

Նշվածը ենթադրում է, որ փաստաբանը պետք է կիրառի օրենքով չարգելված բոլոր հնարավոր միջոցները վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի արդյունավետ կարող են լինել վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար:

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

ՄԱԿ-ի 1990թ. **«Փաստաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքներ»**-ի մասին փաստաթղթի համաձայն, փաստաբանների պարտականությունների մեջ է մտնում, inter alia, **«իրենց վստահորդներին բոլոր պատշաճ միջոցներով օգնելը, և նրանց շահերը պաշտպանելու ուղղությամբ իրավական գործողություններ ձեռնարկելը»** (կետ 13(բ), իսկ իրենց վստահորդների իրավունքները պաշտպանելիս ու արդարադատության իրականացմանը աջակցելիս պարտավոր են պաշտպանել ազգային և միջազգային իրավունքով պաշտպանված մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները, և պետք է մշտապես գործեն ազատորեն և ջանասիրաբար՝ օրենքի և իրավաբանի մասնագիտության ճանաչված սկզբունքների և էթիկական նորմերի համաձայն (կետ 14):

Ըստ գործում առկա նյութերի, Փաստաբանի և Դիմողի կողմից տրված բացատրությունների, Փաստաբանը ստանձնել է Դիմողի շահերը ներկայացնելու պարտականությունը դեռևս 2021 թվականի մայիս ամսին: Փաստաբանի կողմից դիմում չի

ներկայացվել ՀՀ սնանկության դատարան՝ Դիմողին սնանկ ճանաչելու վերաբերյալ:

Փաստաբանի վերը նշված վարքագիծն ակնհայտորեն դուրս է Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերով սահմանված և փաստաբաններից ակնկալվող վարքագծի շրջանակից:

Փաստաբանը ստացել է հոնորար Դիմողի շահերը ներկայացնելու համար և այդպես էլ չի ներկայացրել նրա շահերը դատարանում:

Փաստաբանը նկարագրված վարքագծով խախտել է Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի պահանջները, քանի որ հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողություններ չի կատարել:

Ինչ վերաբերում է Փաստաբանի կողմից նշված այն հանգամանքին. *«Պարտապանի գույքի արժեքի և պարտավորությունների միջև տարբերությունները գնահատելու և դատարան ներկայացնելու համար Դիմողին առաջարկել է ներկայացնել շուկայական գնահատման ապացույց կամ տրամադրել լուսանկարներ, սակայն Դիմողը չի ցանկացել գործը շարունակել, չնայած գրավոր կարգով չի դիմել ծառայությունների մատուցման պայմանագիրը լուծելու խնդրանքով:»*, հարկ է նշել, որ 09.01.2025թ. Աշխատակիցը Փաստաբանից պահանջել է ներկայացնել հետևյալ ապացույցները.

✓ Շուկայական գնահատման արդյունքները կամ այդ գնահատումը կատարելու համապատասխան լուսանկարները ներկայացնելու մասին Դիմողին պահանջ ներկայացնելու և այդ պահանջի ներկայացման օրվա վերաբերյալ ապացույցներ:

✓ Դիմողի կողմից շուկայական գնահատման արդյունքները կամ այդ գնահատումը կատարելու համապատասխան լուսանկարները Ձեզ չտրամադրելուց հետո, Ձեր կողմից կատարված գործողությունների, այդ թվում՝ այդ լուսանկարները կամ գնահատման արդյունքներն այլընտրանքային եղանակներով ձեռք բերելու, ինչպես նաև նշված լուսանկարները կամ գնահատման արդյունքները չներկայացնելու իրավական հետևանքները Դիմողին բացատրելու, վերաբերյալ տեղեկություններ և ապացույցներ:

Փաստաբանը չի ներկայացրել որևէ ապացույց, որ Դիմողին տեղեկացրել է հանձնարարությունը կատարելու խոչընդոտների, այն է՝ գնահատման ներկայացվող գույքի լուսանկարների կամ այդ գույքի գնահատման հաշվետվությունը ներկայացնելու անհրաժեշտության մասին: Ավելին, Viber բջջային հավելվածի ուսումնասիրությունից հետևում է, որ Դիմողը խնդրում է Փաստաբանին ասել իր գործով դատավորի անուն, ազգանունը, սակայն Փաստաբանը պատասխանում է, որ մի փոքր համբերի:

Այսինքն, Դիմողը անգամ տեղեկացված չի եղել, որ առկա են որոշակի ապացույցներ ձեռք բերելու անհրաժեշտություն:

Անդրադառնալով 2022 թվականի ապրիլ-մայիս ամիսներին Փաստաբանի կողմից կատարված հարցումներին և ստացված պատասխաններին, հարկ է նշել, որ Փաստաբանը ստանձնել է Դիմողի շահերը ներկայացնելու պարտականությունը 2021 թվականի մայիս ամսին, այսինքն հարցումները կատարել է Դիմողի շահերի պաշտպանությունը ստանձնելուց մեկ տարի հետո, ինչը ակնհայտ չի համապատասխանում Փաստաբանի կողմից վստահորդի հանձնարարությունն արագ և արդյունավետ կատարելու էթիկայի չափանիշին:

Հանձնաժողովն այս համատեքստում արձանագրում է նաև, որ փաստաբանը պետք է կիրառի օրենքով չարգելված բոլոր հնարավոր միջոցները վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար: **Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների**

կատարմանը, որոնք փաստացի արդյունավետ են վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար: Ձևական բնույթի գործողությունների կատարումը, որոնք, թեկուզև օրինական են, սակայն տվյալ պարագայում օգտակար և արդյունավետ չեն վստահորդի շահերի պաշտպանության համար, չի կարող համարվել փաստաբանի մասնագիտական բարեխղճության ապացույց:

Ամփոփելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը արձանագրում է, որ Փաստաբանը չի ձեռնարկել համարժեք իրավական և փաստացի միջոցներ, որոնք Դիմողի համար կլինեին արդյունավետ՝ ուստի, Փաստաբանի կողմից կատարված հարցումները կրել են ձևական բնույթ:

******

➢ **Կանոնագրքի 3.6.1 ենթակետի խախտման մասով**

Կանոնագրքի 3.6.1 ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:

Կանոնագրքի 3.6.1 ենթակետը հստակ սահմանում է փաստաբանի պարտականությունը կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:

Սույն կանոնից բխում է, որ փաստաբանները ոչ միայն կրում են վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալու, այլ նաև տրամադրված օգնության կամ գործի ընթացքի մասին վերջիններիս տեղեկացնելու պարտականություն: Ընդ որում, փաստաբանի կողմից հենց այս պարտականության կատարումն է, որ հնարավորություն է տալիս վստահորդներին օրինակ տվյալ գործով փոխել իրենց դիրքորոշումը, մոտեցումները կամ նույնիսկ պահանջը: Վերջապես վստահորդի հարցերին պատասխանելը այն ողջամիտ ակնկալիքն է, որ յուրաքանչյուր վստահորդ ունի իր փաստաբանից:

Սույն պարագայում հաստատված է համարվում այն փաստը, որ Փաստաբանը կանոնավորապես չի պատասխանել Դիմողի հեռախոսազանգերին ու նամակներին, կանոնավորապես չի տրամադրել տեղեկություններ գործի ընթացքի մասին, չի պատասխանել վստահորդին հետաքրքրող հարցերին. այս ամենը հաստատվում է Դիմողի ներկայացրած Viber բջջային հավելվածով կատարված նամակագրությամբ բացի դա՝ Փաստաբանը չի ներկայացրել հակառակի մասին վկայող որևէ ապացույց:

Հանձնաժողովը հարկ է համարում նաև նշել, որ Դիմողի կողմից 15.11.2024թ. ներկայացված դիմումի կից նյութերից երևում է, որ Viber բջջային հավելվածով կատարված նամակագրությամբ Դիմողը խնդրում է Փաստաբանին ասել իր գործով դատավորի անուն, ազգանունը, սակայն Փաստաբանը պատասխանում է, որ մի փոքր համբերի այնուհետև Դիմողը հարցնում է, թե մի փոքր, ինչքան արդեն 3.5 տարի է համբերում եմ:

Փաստաբանը չի հերքում այն մտացածին փաստը, որ իբրև առկա է դատական գործ, որն արդեն իսկ մակագրվել է դատավորին, ինչն անթույլատրելի է և ակնհայտորեն հաստատում է Փաստաբանի կողմից Կանոնագրքի 3.6.1 ենթակետի խախտումը:

******

➢ **Կանոնագրքի 3.1.3-րդ ենթակետի խախտման մասով**

Կանոնագրքի 3.1.3-րդ ենթակետի համաձայն՝ գործն ընդունելուց հետո, եթե այն կատարվելու է վճարովի հիմունքներով, ապա իրավական օգնություն ցույց տալու պայմանագիրը պետք է կնքվի հասարակ գրավոր ձևով փաստաբանական գրասենյակի կողմից: Նշված պայմանագիրը պետք է կնքվի ողջամիտ ժամկետում (հանձնարարությունը փաստացի ստանձնելու պահից երկու ամսվա ընթացքում), եթե գործի որոշ հանգամանքներ կամ ծառայության ծավալը ճշտելու անհրաժեշտություն կա:

Կանոնագրքի 3.1.4-րդ ենթակետի համաձայն՝ Վճարովի հիմունքներով փաստաբանական ծառայություն մատուցելու վերաբերյալ պայմանագրում պետք է նախատեսվի՝

- հոնորարի չափը և վճարման կարգը.

- հանձնարարության բնույթը և ծավալը (ատյանը, փուլը և այլն) կամ այն որոշելու չափորոշիչները:

Սույն դրույթների նորմատիվ էությունը կայանում է նրանում, որ փաստաբանի և իր վստահորդի միջև հարաբերություններում ապահովվի անհրաժեշտ որոշակիություն և կանխատեսելիություն՝ իրավական երաշխիքներ ստեղծելով կողմերի բարեխիղճ, փոխադարձաբար արդյունավետ և գործարար շրջանառության էթիկայի տեսանկյունից ընդունելի գործելակերպի համար: Միևնույն ժամանակ, փաստաբանի և վստահորդի միջև կնքված գրավոր պայմանագիրը թույլ է տալիս խուսափել տարաձայնություններից կամ դրանց առաջացման դեպքում ծառայում է վեճի լուծման ապացուցողական հիմք՝ հստակ բովանդակելով, ի թիվս այլնի, հանձնարարության բնույթը և ծավալը, ինչն առնվազն անհրաժեշտ է պարզելու համար, ի վերջո ստացել է վստահորդը հանձնարարությանը համապատասխանող պատշաճ իրավական օգնություն, թե ոչ:

Ընդ որում, հատուցելի փաստաբանական ծառայությունների համար գրավոր պայմանագրի առկայության պահանջ Կանոնագրքով սահմանելը նշանակում է, որ փաստաբանի և վստահորդի հարաբերություններում գրավոր պայմանագրի առկայությունն ունի ոչ միայն քաղաքացիաիրավական, այլև՝ մասնագիտական-էթիկական նշանակություն, քանի որ գրավոր **պայմանագրի առկայությունն է թույլ տալիս վիճելի դեպքերում պարզել կողմերի փոխադարձ իրավունքների ու պարտականությունների ծավալն ու բովանդակությունը, ըստ այդմ նաև՝ պարզել կոնկրետ իրավիճակում փաստաբանի կողմից վարքագծային-էթիկական պահանջների կատարումը:**

Սույն գործում առկա ապացույցների, ինչպես նաև կողմերի դիրքորոշումների հաշվառմամբ, համադրելով դրանք վերը ներկայացված կարգավորումներին, Հանձնաժողովը փաստում է, որ Դիմողի և Փաստաբանի միջև առկա է կնքված միայն մեկ պայմանագիր, որը կնքվել է 05.05.2021 թվականին: Այդ պայմանագրով հատկորոշված առարկային համապատասխան, Փաստաբանը պարտավոր էր կազմակերպել Դիմողի մինչդատական և դատական պաշտպանությունը քաղաքացիական գործով՝ ՀՀ ընդհանուր իրավասության դատարանում, մինչդեռ Փաստաբանն ըստ էության Դիմողից ստացել էր այլ հանձնարարություն՝ ձեռնարկել միջոցներ Դիմողին սնանկ ճանաչելու ուղղությամբ, ինչի կատարման ապահովման կապակցությամբ Փաստաբանը հետամուտ է եղել մեկ տարի անց՝ 2022 թվականի ապրիլ-մայիս ամիսներին, ներկայացնելով հարցումներ:

Այսինքն, ստացվում է, որ Փաստաբանը ի սկզբանե ստանձնել էր Դիմողի շահերի պաշտպանությունը քաղաքացիական գործով, որը պայմանագրին համապատասխան

ենթադրում էր ներկայացուցչություն ՀՀ ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում, սակայն հետագայում իրականացրել է նաև այլ գործողություններ, որոնք կապված են եղել արդեն Դիմողին սնանկ ճանաչելու վերաբերյալ տրված հանձնարարության կատարման հետ, ինչը առնվազն ենթադրում է պայմանագրի կնքում հստակ առարկայի սահմանմամբ:

05.05.2021 թվականին կնքված պայմանագիրն ուսումնասիրվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի համատեքստում՝ պայմանագրի պայմանները մեկնաբանելով նրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ:

Այս համատեքստում, Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում արձանագրել, որ ստեղծված իրավիճակում հնարավոր չէ Փաստաբանի ձեռնարկած գործողությունները դիտարկել 05.05.2021 թվականին կնքված պայմանագրի կատարման տեսանկյունից, քանի որ դրա առարկայից բխող ծառայությունների բնույթն ակնհայտորեն տարբերվում է Փաստաբանի կողմից փաստացի մատուցված և մատուցման ենթակա ծառայությունների բնույթից և ունի տարբեր մասնագիտական ուղղվածություն: Դեռ ավելին՝ Փաստաբանը 18.11.2024թ. ներկայացրած բացատրությամբ հայտնել է, որ 2021թ. մայիսին Արմեն Սարգսյանի հետ կնքել է ծառայությունների մատուցման պայմանագիր՝ **վերջինիս սնանկ ճանաչելու պահանջի հետ կապված:**

Նշվածի հաշվառմամբ, Հանձնաժողովը փաստում է, որ Դիմողի և Փաստաբանի միջև, առնվազն Դիմողին սնանկ ճանաչելու հանձնարարության կատարման ապահովման կապակցությամբ, հասարակ գրավոր ձևով պայմանագիր կնքված լինելը չի հաստատվել:

Հաշվի առնելով ողջ վերոգրյալը, Հանձնաժողովը՝ գնահատելով սույն կարգապահական գործի քննության ընթացքում ձեռք բերված նյութերը, Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացրած բացատրությունները և ապացույցներն իրենց ամբողջության մեջ, գտնում է, որ Փաստաբանի վարքագծում **առկա են Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2, 3.5.5, 3.1.3, և 3.6.1 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշները**:

8. <u>Կարգապահական տույժի ընտրությունը.</u>

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը:

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը:*

Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Օրենքի 39.10 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ժամաքանակը որոշում է փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը: Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելը կարող է կիրառվել նաև որպես լրացուցիչ տույժի միջոց սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված տույժերից մեկի կիրառման հետ մեկտեղ:*

Վերը նշված իրավական նորմերի համակարգային մեկնաբանության արդյունքում Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ Պալատը հանդիսանում է փաստաբանների մասնագիտական, ինքնակառավարվող միավորում, որի խնդիրներից մեկը փաստաբանների իրավաչափ և փաստաբանի վարքագծի կանոններին համապատասխանող վարքագծի ապահովումն է, որը դրսևորվում է Հանձնաժողովի կողմից Օրենքով սահմանված կարգով փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործառույթի իրականացման մեջ:

Օրենքով հստակ նախատեսված են կարգապահական պատասխանատվության միջոցների այն տեսակները, որոնք Հանձնաժողովն իրավասու է կիրառել կարգազանց փաստաբանների նկատմամբ: Ընդ որում, Օրենքում ամրագրված են փաստաբանի պատասխանատվության անհատականացման համար կիրառելի չափանիշներ:

Օրենքով Հանձնաժողովին վերապահված կարգապահական գործառույթից և այդ թվում փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ իրականացնելու և կարգապահական տույժ կիրառելու իրավազորությունից հետևում է, որ Հանձնաժողովը ոչ միայն իրավասու է, այլև պարտավոր է յուրաքանչյուր դեպքում իրականացնել փաստաբանի կողմից կատարված արարքի որակում Օրենքի և Կանոնագրքի շրջանակներում և դրան համապատասխան՝ նշանակել համապատասխան կարգապահական տույժ:

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը, մասնավորապես՝ այն, որ խախտումն իր բնույթով բազմադրվագ է, որոնք լրջորեն վատթարացնում են փաստաբանության հեղինակությունն ու խաթարում են վստահությունը փաստաբանների նկատմամբ: Հանձնաժողովը հաշվի է առնում նաև Փաստաբանի մեղքի աստիճանը, որը մեղմացնող որևէ փաստ կամ ապացույց առկա չէ, ինչպես նաև հաշվի է առնում Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները:

Վերոնշյալի համատեքստում պետք է նաև նշել, որ Փաստաբանը իրեն մեղսագրվող արարքները կատարել է դիտավորությամբ և կատարվածի համար չի զղջացել, վերջինիս վարքագծի հետևանքով տուժել է առաջին հերթին նրա վստահորդը՝ Դիմողը, ինչն իր հերթին բացասական ազդեցություն է ունեցել կամ կարող էր ունենալ փաստաբանական համայնքի և փաստաբանի մասնագիտության հեղինակությունն ու բարի համբավի վրա:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի նկատմամբ որպես հիմնական կարգապահական տույժ պետք է կիրառել «խիստ նկատողություն», ինչպես նաև՝ որպես լրացուցիչ կարգապահական տույժ՝ «լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել» տույժի տեսակները:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի,

39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 8-րդ մասի, 39.10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետի, 2-րդ և 3-րդ մասերի պահանջներով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Փաստաբան Մարիամ Արամի Աբրահամյանի (արտոնագիր՝ թիվ 490) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «խիստ նկատողություն», ինչպես նաև լրացուցիչ տույժ՝ պարտադիր վերապատրաստման դասընթացների մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա» թեմայով 4 ակադեմիական ժամ ժամաքանակով՝ «Փաստաբանության մասին» Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.2, 3.1.3, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի պահանջների խախտման համար:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-24177-2-Ա
19 մարտի 2025թ.
ք.Երևան